ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հունիսի 2022թ. N 136-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂ-ՍՊԱՍԱՐԿՈՒՄ » ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N5-Ն որոշման, հաշվի առնելով «Ջերմուկի ԲԿՍ» ՍՊ ընկերության տնօրեն Հասմիկ Մարգարյանի դիմում-հայտը (մտից՝ 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Թույլատրել «Ջերմուկի Բնակչության Կենցաղ-Սպասարկում» ՍՊ ընկերությանը տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 56):

2. «Ջերմուկի Բնակչության Կենցաղ-Սպասարկում»» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ջերմուկի Բնակչության Կենցաղ-Սպասարկում» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարված լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունիսի 2022թ. N 137-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Գուրգեն Ավագյանի՝ 2022 թվականի հունիսի 6-ի հայտը՝ (մտից N 881, 06.06.2022 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 5/1 հասցեում գտնվող սեփական հողամասում հասարակական սպասարկման կենտրոն կառուցելու համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով Ջերմուկ քաղաքի բնակիչ Գուրգեն Ավագյանին տալ նախագծման թույլտվություն:

2. Գուրգեն Ավագյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Ավագյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հունիսի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունիսի 2022թ. N 138-Ա

ՋԻՎԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11 -ի N 5-Ն որոշման 2-րդ կետի, և հաշվի առնելով Արմավիրի մարզի Հայկաշեն գյուղի բնակիչ Ջիվան Ալբերտի Կարապետյանի դիմումները (մտից՝ 2022 թվականի հունիսի 7-ի N 888 և N 889)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ձևակերպել կառուցապատող Ջիվան Ալբերտի Կարապետյանի կողմից իրականացված Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 44 հասցեում գտնվող բնակելի տների շահագործման թույլտվությունը:
2. Ջիվան Ալբերտի Կարապետյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031385 հաշվեհամարին մուծել 20 000-ական (քսան հազարական) դրամ տեղական վճար՝ շինարարության ավարտը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Ջիվան Ալբերտի Կարապետյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 9
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունիսի 2022թ. N 139-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ.

ա) - աշխատակազմի քարտուղարի (պաշտոնի ծածկագիրը՝ 1.2-1)

- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.1-1)

- աշխատակազմի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-2)

բ) - աշխատակազմի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-3)

-աշխատակազմի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-4)

-աշխատակազմի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-5)

-աշխատակազմի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-4)

-աշխատակազմի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-5)

–աշխատակազմի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-6)

գ) - աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-1)

- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-1)

- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-2)

- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-3)

դ) - աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.2-1)

- աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.2-2)

2. Սույն որոշման առաջին կետի «ա» ենթակետում նշված մրցույթների օր նշանակել 2022 թվականի հուլիսի 29-ը:

3.Սույն որոշման առաջին կետի «բ» ենթակետում նշված մրցույթների օր նշանակել 2022 թվականի հուլիսի 26-ը:

4. Սույն որոշման առաջին կետի «գ» և «դ» ենթակետերում նշված մրցույթների օր նշանակել 2022 թվականի հուլիսի 20-ը:

5. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Հայտարարությունների տեքստերը՝ համաձայն NN 1,2 և 3 հավելվածների:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 9
Ջերմուկ